

ՀԱՅՆԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՎ ՏՆՐՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Վ. Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Գերմանական մեծագույն բանաստեղծներից մեկի՝ Հայնրիխ Հայնեի երկերի բազմաթիվ թարգմանությունները սիրով են ընդունել հայ ընթերցողները։ Դրանցից այստեղ ուղում ենք կանգ առնել միայն երկուսի վրա, որոնք հայ թարգմանական պոեզիայի գանձարանում շոգում են իրենց զասական փայլով։

Մեկը Վահան Տերյանի «Դու, որպես հեռու լեռների շուշան» և մյուսը Հովհաննես Թումանյանի «Հեռո՛ւ, հեռո՛ւ կթոցնեմ» թարգմանական գործերն են։

«Դու որպես հեռու լեռների շուշանը» ամբողջովին կլանել է Տերյանին, նա իրեն գտել է այդ բանաստեղծության մեջ, ստեղծագործական գյուտ է կատարել և, կարելի է ասել, բանաստեղծությունը «նորից է գրել»։ Թող սխալ չհասկացվի, երբ ասում ենք՝ նորից է գրել։ Խոսքը բնագրի մեջ կատարված փոփոխությունների մասին չէ, որը պահպանված է համարյա նույնությամբ, Հայնեին հատուկ թախիծով ու խոր քնարականությամբ, այլ այն, որ բանաստեղծությունն իր երկրորդ ծնունդն է ապրել թարգմանության մեջ, նույն կատարելությամբ հնչել մեկ այլ լեզվով։

Ահա այդ բանաստեղծությունը

Du bist wie eine Blume,
So hold und schon und rein;

Ich schau dich an, und Wehmut
Schleicht mir ins Herz hinein.

Mir ist, als ob ich die Hände
Aufs Haupt dir legen Sollt,
Betend, das gott dich erhalte
So rein und Schon und hold¹.

Դու, որպես հեռու լեռների շուշան,
Դու և քնքո՛ւշ, մաքո՛ւր, և՛ նուրբ,
և՛ սիրուն.

Նայում եմ վրբադ ու մի անսահման
Թախիծ է ահա սիրտըս ներս
սողում...

Եվ թրվում է ինձ, որ ձեռներբս ես
Պիտի դնեմ քո գլխին ոսկեվարս,
Աղոթելով, որ աստված պահի քեզ
Մի՛շտ այդպես մաքո՛ւր, և՛ սիրուն, և՛
պա՛րզ...²

Հայնեն է այստեղ ամբողջովին՝ Տերյանի քերուշ հոգով բեկված, իր մեղմությամբ, համակ տենչանքներով, սիրո անցյալ ու ներկա տանջանքներից մի տեսակ և՛ իմաստնացած, և՛ հոգնած։ Բանաստեղծության հոգեհարազատությունն է, անշուշտ, մղել քնարերգուին քանդակելու կատարելությամբ զմայլեցնող մի բանաստեղծություն, որը թարգմանություն լինելով հանդերձ, նաև ազգային ստեղծագործություն է։ Այստեղ է, որ թարգմանչին օգնել է նրբերանգր, ոս-

¹ Heine, Ein Lesebuch für unsere Zeit, Berlin — Weimar, 1965, s. 81.

² Վահան Տերյան, Երկեր, Երևան, 1956, էջ 426.

կերչական մանրակրկիտությունը: Հայնեն շունի «հեռու լեռների շուշան» արտահայտությունը: Նրա տողն այսպիսին է. «Du bist wie eine Blume», «դու նման ես ծաղկի», կամ՝ «դու ինչպես մի ծաղիկ»: Բանաստեղծության հենքի մեջ դիտենք «դու որպես հեռու լեռների շուշան» տողը և մի րոպե փորձենք դուրս գցել այն, տեղը դնելով «դու նման ես ծաղկի», կամ «դու, ինչպես մի ծաղիկ» արտահայտությունը: Բանաստեղծության հայերեն տարբերակը (թող թույլ տրվի մեղ այսպես ասել), կկորցնի իր կես փայլը, թեև ավելի կմոտենա ընադրին: «Հեռու լեռների շուշանը» այն ոսկե նետն է, որ ուղղություն է տալիս ողջ թարգմանությանը, աղգայնացնելով, բայց ոչ տեղայնացնելով այն, կամուրջ է ձգում մեր և այլադղի պատկերացումների մեջ: (Հիշենք նաև Թումանյանի «մին մանկան պես լաց է լինում, մին ոռնում է ոնց գաղան» տողը): Եթե՝ բային, «շուշանի» պես գեղեցիկ պատկերը նոր հմայք է տալիս սիրածին, որի համար հետագա տողերը լրացումներ են միայն:

Դու քնքո՛ւշ, մաքո՛ւր, և՛ նուրբ, և՛ սիրուն,
Նայում եմ վրրադ ու մի անսահման
Թախիծ է ահա սիրտըս ներս սողում...

Հայնե է, և, միաժամանակ, Տերյան: «Լեռնային շուշանը» հայտարարւ է բանաստեղծի համար, որպեսզի հաստատի իր հետագա բոլոր բաղձանքները.

Աղոթելով, որ աստված պահի քեզ
Մի՛շտ այդպես մաքո՛ւր, և՛ սիրուն, և՛ պա՛րզ...

Հայնեի այս բանաստեղծության թարգմանությունը պետք է դասել Տերյանի այն ստեղծագործությունների կողքին, որոնք ընկալվում են անվերապահորեն, բյուրեղի տեսք ունեն, գրված են ազնիվ բոնկումով: Հայնեից կատարած մյուս թարգմանությունների համեմատությամբ «Դու, որպես հեռու լեռների շուշանը» մնում է գազաթ: Ահա, օրինակ, «Ասա՛, որտեղ է» բանաստեղծությունը՝ իր հայկական տարբերակով: Նույնքան քնարական մի բանաստեղծություն, բայց խոր դրամատիզմով լի, նույնքան հայնեական, բայց միաժամանակ ամբողջովին հայնեական, որի մեջ գուցե խտացված է բանաստեղծի սիրո ողջ տառապանքը: Ընդգծված կերպով ողբերգական են հատկապես վերջին տողերը, ուր Հայնեն հայտարարում է իր սիրո կործանումը. «Եվ այս պրբույվը մի սափոր է, այրված սիրո մոխիրով լեցուն»:

Und dies Büchlein ist die Urne
Mit der Asche meiner Liebe.

Բերենք բանաստեղծության հայերեն թարգմանությունը.

Ասա՛, ո՞ւր է քո սիրածը սիրուն,
Որին երբեմն այնպես խանդավառ
Նրզում էիր դու, երբ հուր-բոցերում
Այրվում էր հողիդ հիացքով խելառ...

Մարեւ են վաղուց կրակները հին,
Իմ սիրար հիմա ցուրտ է հավիտյան,
Եւ այս զրքույկը — դամբան է, շիրիմ³,
Սիրո կրակի մոխիրն է միայն...

Ինչ խոսք, որ բանաստեղծությունը թարգմանված է սիրով: Բնադրի հետ միա-
սին պահպանված է ընդհանուր տրամադրությունը, կործանված սիրո ողբեր-
գությունը: Բայց եթե բանաստեղծության մոտենանք տեղանական արվեստի
պահանջկոտությունից և այս թարգմանությունը համեմատենք առաջինի հետ,
կհամոզվենք, որ տեղ-տեղ այն իր կատարելությամբ զիջում է լեռների շու-
շանին»: Մի դեպքում լինադրից մի փոքր շեղվելը նոր լույս է փռում թարգմա-
նության վրա, մեկ այլ դեպքում բնադրին խիստ հավատարմությունը պատճառ
է դառնում թույլ տողերի: Հայկենի «Sag, wo ist dein schönes Liebchen»-ում
«schönes» և «Liebchen»-ը տարբեր են հնչում, իսկ հայերենում «քո սի-
րածը սիրուն» ոչ այնքան բարեհնչուն ալիտերացիա է, այդ բառերի կոդը-
կոդքի դասավորությունը հավասարապես կարող էր վնասել նաև հայերեն
գրված բանաստեղծությանը, ինչպես վնասել է թարգմանությանը:

Ուժեղ չէ նաև «Իմ սիրտը հիմա ցուրտ է հավիտյան» տողը, Հայկենի
«Und mein Herz ist kalt und trübe» տողի համեմատությամբ, որտեղ
նա երկու տարբեր նշանակություն և իմաստ ունեցող բառերով խտացնում,
ծանրացնում է իր հոգեվիճակը (սիրտը և՛ սառն է, և՛ տխուր), այնինչ
հայերենի «սիրտը ցուրտ է հավիտյան» արտահայտությունը՝ հոգեվիճակի
ծանրությունը տեղափոխելով ժամանակի մեջ, չի խորացնում այն: Եւ վեր-
ջապես Հայկենի պոեզիային այնքան բնորոշ, տվյալ տրամադրությունը, հոգե-
վիճակը, ասելիքը միանգամից շեշտող, զազաթնակետին հասցնող վերջին
տողը, որը հաճախ անսպասելի, միայն Հայկենին հատուկ ինքնածաղր է՝ խոր
ողբերգությամբ, և բոլոր դեպքերում առաջնակարգ նշանակություն ունեցող
տող: Հայկենի պոեզիան մեղ առատ նյութ է տալիս նման օրինակների, իսկ
քննվող բանաստեղծության մեջ այդ վերջին տողը խիստ կարևոր է իր ընդ-
հանրացման ուժով:

Und dies Büchlein ist die Urne
Mit der Asche meines Liebe⁴.

Հայերենում երկփեղկվելով, այն դարձել է մի ամփոփ պատկերի ոչ նույն
ուժով կրկնված դադափար:

Եւ այս զրքույկը — դամբան է շիրիմ,
Սիրո կրակի մոխիրն է միայն...

Հայերեն արձակով այս տողերը հավանաբար կհնչեին «Եւ այս զրքույկը
սափոր է միայն, այլված սիրուս մոխիրով լեցուն»:

³ Նույն տեղում, էջ 427:

⁴ H. Heine, Ausgewählte Werke, Moskau, 1937, I B-d, s. 87.

Մի փոքր հանդամանորեն անդրադարձանք Տերյանի՝ Հայնեից կատարած «Ասա՛, որտեղ է» բանաստեղծության թարգմանությանը, միայն ավելի շեշտելու համար «Դու, որպես հեռու լեռների շուշանի» անգերազանցելի հմայքը։ Այսպիսի թարգմանությունները վկայադիր են հայ ժողովրդի շափածո արվեստի բաղմադարյան ավանդույթներին ու բարձր ընկալումներին և ուղի են հարթում դեպի պոետական նոր ու հարուստ պատկերացումները։

Թարգմանական ստեղծագործությամբ անհամեմատ ավելի շատ է զբաղվել Հովհաննես Թումանյանը, որի կատարած գործն այս ասպարեզում նշանակալից է և՛ ընդգրկումների քանակով ու ծավալով, և՛ բարձր որակով։ Հայ թարգմանական պոեզիայի զանձարանից առանց հիշողությունը լարելու մեկը մյուսի ետեից կարելի է ողեկոչել Թումանյանի հանճարեղ գրչին պատկանող բազմաթիվ գործեր, որոնք հարադատանալով մեր շափածոյին, ընդհուպ մինչև նրա հետ նույնանալը՝ արտասանվում և նույնիսկ երգվում են ժողովրդի կողմից, որպես ամենասիրված գործեր։

Որքա՛ն պարզ ու հանգիստ է նկարված Գյոթեի «Լերանց շարքերը»։ Իր մեջ ամփոփած զիպսկոպիկական անտակ մի խորություն, այն մտերիմ է շարունակ խորհող ու մտածող, շարունակ բնության հետ խոսող ու նրա հոյակապ զեղեցկությունները զգացող փիլիսոփա բանաստեղծին։

Լերանց շարքերը
Նիրհում են մրթնում,
Խաղաղ մարգերը
Մըշուշ է պատում.
Ծամփեն հանդարտվել
Ձի շարժվում քամի,
Ուր որ է՝ դու էլ
Կրքընես հիմի՞ս։

Բնության հարատև շարժման ու փոփոխության սքանչելի մի պատկեր, որ կանգ է առել միայն մի պահ՝ ընթերցողի հիացքը շարժելու համար, մի փոքրիկ բանաստեղծություն, որ խոսում է հավիտենականության հետ և հավասարապես զեղեցիկ է իր հայերեն տարբերակում։

Թումանյանն այսպես երևում է իր տարերքում նաև բաղմաթիվ ուրիշ մեծարվեստ գործերի մեջ, որոնք մեր առջև բացվում են իրենց ուրույն հուղաշխարհով, բնապատկերով ու հոգեբանությամբ։ Այդպես է Լոնգֆելլոյի «Հայավաթի երգը»՝ իրեն հատուկ վեհ ողմանտիղմով, էպիկական սիրով դեպի բնությունն ու մարդը, հավատով՝ դեպի նրա աստվածային մեծագործությունները։ Այդպես է, երբ վերարտադրվում է Բայրոնի թախիժը՝ համաշխարհային վշտի ընդվզումներով և բմբոստ մարտակոչով՝ ընդդեմ աղաաությունը բռնադատող օրենքների, այդպես է մենության մեջ ազատության կարոտից մեռնող «Մծի-րին» և մարդկային տառապանքներով լի «Ձմեռվա իրիկունն» ու «Ջրահեղձը»։

Ահա՛ թումանյանական փայլուն թարգմանությունների այս մեծ շարքում իր առանձնահատուկ արվեստով ձգում է զարձյալ Հայնեի գողտրիկ քերթվածներին «Հեռո՛ւ, հեռու կթոցենեմ» բանաստեղծությունը, որտեղ վստահո-

5 Հ. Թումանյան, Երկեր, Երևան, 1958, հ. II, էջ 196։

րեն կարելի է ասել, Թումանյանը գերադասեցել է բանաստեղծության մեծ հեղինակին և ստեղծել է արվեստով Գյոթեի «Լարդի» թարգմանությանը հավասար մի գործ:

Երկու բնագրերի առաջին քառյակները բերենք ամբողջովին՝ բանաստեղծության հայկական օրինակի ղեղեցկությունը ցույց տալու համար:

Auf Flügeln des gesanges,
Herzliebchen, trag ich dich fort,
Fort nach den Fluren des Ganges,
Dort weiß ich den Schönsten Ort.⁶

Ինքնըստինքյան պատկերավոր, երևակայության թռիչք ունեցող այս քառյակը հնչեղության հոյակապ գյուրությունամբ աչքի ընկնող նոր որակ է ստանում հայերեն թարգմանության մեջ:

Հեռու, հեռու կը թռցրենեմ
Քեզ իմ երգի թևերին,
Սքանչելի մի տեղ գիտեմ
Ես Գանգեսի ափերին:

Որքան թեթև, երաժշտական է թումանյանական հանգը, թեև թարգմանչի հեռացումը բնագրից հենց այս քառյակում ամենից աննշմար է: Առաջին տողում կրկնելով իրարից անջատված «հեռուները» («fort»), Թումանյանը միանգամից ստեղծում է առաջատար բանաստեղծական այն պատկերը, որը պետք է ընթերցողին երևակայությամբ տեղափոխի ոռոմանտիզմով լեցուն անձանոթ ափեր: Եվ երբ գծագրվում է ցանկալի պատկերը, ավելի քան նրբությամբ է կերտվում նաև բաղձալի միջավայրը, ուր երկու սիրահարներ պետք է ապրեն վայելքի մեջ, հեռու՝ սիրո երանությունը փշրող առօրյայից:

Պարտեղն այնտեղ ծաղկում է ճոխ
Լուսնի խաղաղ լույսի տակ,
Իրենց քրրոջն ըսպասում են
Լոտոսները ըսպիտակ:

Գտնված չափը այնքան երգային է, որ թվում է՝ անվերջ կարող ես շարունակել: Ստեղծագործական գյուտ է նաև բանաստեղծության շորրորդ տունը: Ակնառու համեմատության համար, ավելի նպատակահարմար է այն բերել երկու լեզվով, որն անմիջապես զգայտուն կգարձնի հայերեն թարգմանության կատարելությունը:

Es hüpfen herbei und lauschen
Die frommen, klugen Gazell'n;
Uud in der Ferne rauschen
Des heiligen Stromes well'n.

⁶ H. Heine, նշվ. աշխ., էջ 40.

⁷ Հ. Թումանյան, նշված հատորը, էջ 199.

Եվ ահա քառյակի հայերենը,— երազային ինչպես բնագիրը և գուցե նույնիսկ ավելի երազային ու քնարական, քան բնագիրը.

Վիթերն երկչոտ ցատկրտում են,
 հրրտնած պըշնում իրարու.
 Գանգեսը լա՛յն, հանդիսավոր,
 Հոսում հանդարտ ու հեռու:

Այս քառյակում թերևս թարգմանիչն ավելի է հեռացել բնագրից: Հայ-նեական «Die frommen, klugen Gazell'n» նա փոխարինել է մի եզակի «վիթերն երկչոտ» ածականով, որն անշուշտ ավելի անմիջապես է բնութագրում կենդանական աշխարհի այդ հազվագյուտ գեղեցիկ, բայց նաև իսկապես առաջին հերթին երկչոտ էակներին, այնինչ Հայնեի «համեստ, խելոք» արտահայտությունները, թերևս ավելի մեծ դիպուկությամբ, կիրառվեին մեկ ուրիշ դեպքում ևս: Նույն կերպ էլ ավելի էպիկական է «Գանգեսը լա՛յն, հանդիսավոր» տողը՝ Հայնեի «Սուրբ հոսանքի ալիքները» տողից և ավելի շեշտված է դժագրում ցանկալի պատկերը:

Այս սքանչելի բանաստեղծությունն ավարտվում է մի քառյակով, որն իր տրամադրությամբ ամբողջովին ներդաշնակում է առաջին քառյակում սիրածին տրված խոստմանը.

Այնտեղ պիտի անհող պառկենք
 Արմավենու րստվերում,
 Սեր վայելենք, սուզվե՛նք, ապրե՛նք
 Երազների աշխարհում:

Բնական է, որ Հայնեի նման մեծ քնարերգուն ներշնչման աղբյուր է եղել մեր երկու դասականների համար, գրավել է նրանց ուշադրությունը: Եվ թեև Խումանյանն ու Տերյանը Հայնեի պոեզիայով զբաղվել են միայն նախասիրությամբ, ընտրելով ընդամենը մի քանի բանաստեղծություններ, այդ չի խանգարել նրանց հայ թարգմանական պոեզիային ընծայել չափաժողովեստի այնպիսի նմուշներ, ինչպես վերը նշված երկու բանաստեղծություններն են: